

**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ FCM N \_\_/18**

**ք. Երևան**

« \_\_ » \_\_\_\_\_ 2018թ.

«Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գործունեության հասցե՝ ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50, ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա՝ ՆԸ թիվ 0004, տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից՝ 27.06.2008թ., վերաձևակերպված ՀՀ ԿԲ խորհրդի 25.11.2016թ. թիվ 205Ա որոշմամբ), այսուհետև Բրոքեր՝ ի դեմս գործադիր տնօրեն Արեն Հակոբյանի, որն առաջնորդվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բրոքերի կանոնադրությամբ, մի կողմից, և \_\_\_\_\_ (հասցե՝ \_\_\_\_\_), այսուհետև Հաճախորդ (ծածկագիր N \_\_\_\_\_), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

- 1.1. Սույն պայմանագրով Բրոքերը պարտավորվում է իր անունից և Հաճախորդի հաշվին, կամ Հաճախորդի անունից և նրա հաշվին, վարձատրության դիմաց և Հաճախորդի հանձնարարությամբ կատարել արժեթղթերի առքի և/կամ վաճառքի գործարքներ՝ համաձայն Հաճախորդի կողմից տրված պատվերում նշված գնային, ծավալային և ժամանակային պայմանների:
- 1.2. Մինչև սույն պայմանագրի կնքումը Բրոքերը Հաճախորդին է տրամադրել Բրոքերի և վերջինիս կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների, արժեթղթերի տեսակների և հնարավոր ռիսկերի, գործարքի կնքման վայրի, բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի և միջնորդավճարների մասին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ պարունակող բուկլետ (տեղեկատվական ամփոփագիր):

**2. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 2.1. Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն Հաճախորդի կողմից Բրոքերի ներքին կանոններով սահմանված ձևին համապատասխան լրացված և Բրոքերի գործառնական բաժին ներկայացված պատվերը: Մինչև սույն պայմանագրի կնքումը Բրոքերը գրավոր ձևով ծանոթացրել է Հաճախորդին պատվերում նշվող տեղեկությունների՝ մասնավորապես գործարքի կնքման համար կիրառվող պատվերների տեսակների և դրանց առանձնահատկությունների հետ:
- 2.2. Պատվերը Բրոքերի գործառնական բաժին ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է առձեռն, ուղարկվել է փոստով կամ տրվել է հեռախոսով (պատվերների ներկայացում գրավոր և ոչ գրավոր ձևով):
- 2.3. Այնպիսի իրավիճակներում, երբ անհրաժեշտություն է առաջացել Հաճախորդի միջոցների հավանական կորուստը կանխելու կամ նվազեցնելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, Հաճախորդի կողմից պատվերները կարող են տրվել նաև սույն պայմանագրի 2.2. կետում չնշված կապի այլ միջոցներով, որոնք համարվում են համաձայնեցված Բրոքերի և Հաճախորդի միջև: Այդ դեպքում Հաճախորդի կողմից տրված բոլոր այն պատվերները, որոնք չեն ներկայացվել 2.2. կետի համաձայն, պետք է մինչև պատվերի տրման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը 2.2. կետով սահմանված կարգով ներկայացվեն Բրոքերին:
- 2.4. Հաճախորդի կողմից պատվերը գրավոր ձևով ներկայացվելու դեպքում այն տրվում է երկու օրինակից, ընդ որում, մեկ օրինակը մնում է Բրոքերի գործառնական բաժնում, իսկ մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և գործառնական բաժնի պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին:
- 2.5. Հեռախոսով պատվեր ստանալու դեպքում Բրոքերը պետք է նույնականացնի Հաճախորդին: Հաճախորդի նույնականացումը կատարվում է գաղտնաբառի հարցում կատարելու միջոցով: Հաճախորդին նույնականացնելու համար տրվել է « \_\_\_\_\_ » գաղտնաբառը:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ**

- 3.1. Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև 20 \_\_թ. \_\_\_\_\_ -ը ներառյալ:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 4.1. Հաճախորդն իրավունք ունի՝

4.1.1. Բրոքերի ներքին կանոններով սահմանված կարգով պատվերներ ներկայացնել վերջինիս՝ սույն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում,

4.1.2. Ետ կանչել ներկայացված պատվերը կամ դրանում էական պայմանների (գնային, ծավալային կամ ժամանակային) փոփոխություններ կատարել, եթե տվյալ պատվերով գործարք դեռևս չի կնքվել Բրոքերի կողմից,

4.1.3. միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ Բրոքերին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու և Բրոքերի կողմից, սույն պայմանագրին առնչվող՝ փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

### 4.2. Հաճախորդը պարտավոր է՝

4.2.1. մատուցվող բրոքերային ծառայությունների կամ արժեթղթերի վերաբերյալ իր գիտելիքների և փորձի մասին ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում տեղեկացնել Բրոքերին՝ վերջինիս ներքին կանոններով սահմանված ձևին համապատասխան տեղեկություններ ներկայացնելու միջոցով,

4.2.2. Ետ կանչել իր պատվերը, եթե դրանով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների կամ արժեթղթերի վերաբերյալ իր գիտելիքների և փորձի մասին ներկայացված տեղեկություններին,

4.2.3. գնման պատվեր ներկայացնելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում Բրոքերի՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում բացված՝ հաճախորդների համար առանձնացված թիվ \_\_\_\_\_ հաշվարկային հաշվին փոխանցել գործարքի ողջ գումարը,

4.2.4. վաճառքի պատվեր ներկայացնելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում Բրոքերին տրամադրել վաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում), բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը Բրոքերի գործող «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության» կանոնակարգի համաձայն հանդիսանում է Հաշվետեր,

4.2.5. սույն պայմանագրի 6.1. և 6.5. կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում ամբողջովին վճարել Բրոքերի միջնորդավճարը և հատուցել վերջինիս կողմից կատարված՝ սույն պայմանագրին առնչվող բոլոր անհրաժեշտ ծախսերը,

4.2.6. իր մեղքով պատվերի կատարումն անհնարին դարձնելու դեպքում Բրոքերին վճարել լրիվ ծավալով՝ սույն պայմանագրի 6.1. և 6.5. կետերով սահմանված չափով և կարգով,

4.2.7. պահպանել սույն պայմանագրի հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

### 4.3. Բրոքերն իրավունք ունի՝

4.3.1. շեղվել պատվերում նշված պայմաններից, եթե գործի հանգամանքներով դա անհրաժեշտ է ի շահ Հաճախորդի, և Բրոքերը չի կարողացել նախապես հարցում անել Հաճախորդին կամ ողջամիտ ժամկետում չի ստացել իր հարցման պատասխանը,

4.3.2. մատուցված ծառայությունների դիմաց իրեն հասանելիք վարձատրությունը, ինչպես նաև սույն պայմանագրին առնչվող բոլոր անհրաժեշտ ծախսերը գանձել Բրոքերի կողմից հաճախորդների համար բացված հաշվարկային հաշվից (վաճառքի պատվեր կատարելու դեպքում),

4.3.3. սույն պայմանագրով սահմանված կարգով միակողմանիորեն փոփոխել բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող սակագները,

4.3.4. մերժել Հաճախորդի պատվերի ընդունումը՝ Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի (ստորագրության, սույն պայմանագրի 2.5. կետում նշված գաղտնաբառի) անհամապատասխանության կասկածի դեպքում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Բրոքերի ներքին կանոններով նախատեսված այլ դեպքերում,

4.3.5. միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ Հաճախորդին ոչ ուշ, քան 30 օր առաջ տեղեկացնելու և վերջինիս վնասները լրիվ հատուցելու պայմանով:

### 4.4. Բրոքերը պարտավոր է՝

4.4.1. բարեխղճորեն կատարել Հաճախորդի բոլոր պատվերները ու վերջինիս նկատմամբ սույն պայմանագրով ստանձնած այլ պարտականությունները՝ ելնելով բացառապես Հաճախորդի շահերից (ֆիդուցիար պարտականություն),

4.4.2. իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակներում բանավոր և/կամ տեղեկատվական ամփոփագրի միջոցով տեղեկացնել Հաճախորդին արժեթղթերի ձեռքբերման, հաշվառման, օտարման եւ

դրանցով ամրագրված իրավունքների իրականացման առանձնահատկությունների և դրանց հետ կապված ռիսկերի մասին,

4.4.3. անմիջապես, մինչև պատվերի կատարումը տեղեկացնել Հաճախորդին, երբ վերջինիս կողմից ներկայացված պատվերով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների կամ արժեթղթերի վերաբերյալ իր գիտելիքների և փորձի մասին ներկայացված տեղեկություններին,

4.4.4. առաջնահերթ կատարել Հաճախորդի պատվերները՝ իր անունից և իր հաշվին գործարքներ կատարելիս,

4.4.5. սույն պայմանագրի 4.3.1. կետով թույլ տրված շեղումների մասին անմիջապես ծանուցել Հաճախորդին, երբ տվյալ ծանուցումը դառնում է հնարավոր,

4.4.6. վաճառքի կայացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին տրամադրել վերջինիս հասանելիք գումարը՝ փոխանցելով այն Հաճախորդի կողմից նշված՝ \_\_\_\_\_ բանկում սպասարկվող թիվ \_\_\_\_\_ հաշվարկային հաշվին,

4.4.7. գնման կայացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում Բրոքերի գործող «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության» կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանված կարգով Հաճախորդին անվճար տրամադրել պատվերում նշված արժեթղթերի փոխանցումը հավաստող՝ Հաճախորդի անձնական հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանք կամ արժեթղթերի հաշվից քաղվածք, եթե Հաճախորդը Կանոնակարգի համաձայն հանդիսանում է Հաշվետեր,

4.4.8. Հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել (առաքել փոստով կամ փոխանցել առձեռն) անկախ աուդիտորի կողմից հաստատված Բրոքերի տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատճենը՝ վավերացված Բրոքերի կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ,

4.4.9. պատվերի հիման վրա արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն Հաճախորդին տրամադրել գործարքի կնքման վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն՝ Բրոքերի ներքին կանոններով սահմանված ձևին համապատասխան,

4.4.10. յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ը էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն Հաճախորդին տրամադրել վերջինիս պատվերների հիման վրա կատարված գործարքների և արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ պարբերական հաշվետվություններ՝ Բրոքերի ներքին կանոններով սահմանված ձևերին համապատասխան,

4.4.11. առնվազն 7 տարվա ընթացքում պահպանել սույն պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և Հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները՝ վավերացված Բրոքերի կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ,

4.4.12. պահպանել սույն պայմանագրի հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

4.4.13. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Հաճախորդի կրած վնասները, եթե Բրոքերի կողմից կատարվել են Հաճախորդի շահերին վնասող գործողություններ,

4.4.14. սույն պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հաճախորդին փոխանցել վերջինիս պատկանող արժեթղթերն ու դրամական միջոցները,

4.4.15. պատվերով տրված գործարքի չկատարման դեպքում վերադարձնել Հաճախորդին դրամական միջոցները և/կամ արժեթղթերը:

## 5. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Բրոքերի մոտ գտնվող Հաճախորդի արժեթղթերն ու դրամական միջոցները, ինչպես նաև դրանց օգտագործման հետևանքով ստացված շահույթը չի կարող գրավ կամ բռնագանձվել Բրոքերի պարտքերի դիմաց՝ առանց Հաճախորդի գրավոր համաձայնության:

5.2. Բրոքերի սնանկացման կամ անվճարունակության, ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի դադարեցման դեպքում Հաճախորդի կողմից Բրոքերին հանձնված արժեթղթերը, դրամական միջոցները և դրանց կառավարման հետևանքով առաջացած շահույթն առանձնացվում են Բրոքերի գույքից և վերադարձվում Հաճախորդին՝ վերջինիս առաջին իսկ պահանջով:

5.3. Բրոքերի և Հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ, եթե արժեթղթերի կարգավորվող շուկայում բացակայում է Հաճախորդի կողմից ներկայացված վաճառքի պատվերի պայմաններով արժեթղթերի նկատմամբ պահանջարկ, ապա Բրոքերը կարող է առևտրային նստաշրջանի ընթացքում Հաճախորդից նույն պայմաններով գնել վաճառվող արժեթղթերը (ամբողջությամբ կամ մասնակի):

## **6. ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

6.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդը վարձատրում է Բրոքերին՝ համաձայն Բրոքերի կողմից 11.07.2016թ.-ին հաստատված սակագների, որոնք հրապարակված են Բրոքերի ինտերնետային կայքում: Մինչև սույն պայմանագրի կնքումը Հաճախորդը ծանոթացել է բրոքերային ծառայությունների մատուցման՝ Բրոքերի սակագների հետ:

6.2. Բրոքերն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սակագները՝ Հաճախորդին այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով:

6.3. Սակագների փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում, մինչև նոր սակագների ուժի մեջ մտնելը, Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը: Այս դեպքում Բրոքերի և Հաճախորդի միջև հաշվարկները կատարվում են նախկին սակագներին համապատասխան:

6.4. Բացի Հաճախորդի պատվերի հիման վրա կնքված գործարքի դիմաց Բրոքերի վարձատրության վճարումից, Հաճախորդը փոխհատուցում է նաև Բրոքերի կատարած այն ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են Հաճախորդի պատվերների կատարման հետ:

6.5. Միջնորդավճարը և Բրոքերի կողմից կատարված՝ սույն պայմանագրին առնչվող բոլոր այլ անհրաժեշտ ծախսերը, Հաճախորդի կողմից փոխանցվում են Բրոքերի կողմից նշված դրամական հաշվին կամ Բրոքերի կողմից գանձվում են հաճախորդների համար բացված հաշվարկային հաշվից՝ գործարքի կատարումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6.6. Մեկից ավելի անգամ Բրոքերի ծառայություններից օգտված Հաճախորդների համար բրոքերային ծառայությունների մատուցման սակագները կարող են որոշվել նաև բանակցությունների միջոցով՝ համաձայն Բրոքերի և Հաճախորդի միջև կնքված սակագների փոփոխության համաձայնագրի:

## **7. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

7.1. Կողմերի միջև կապն իրականացվում է հեռախոսով կամ անձնական հանդիպումների միջոցով:

## **8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

8.1. Սույն պայմանագրից բխող կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

8.2. Կողմերը պատասխանատվություն չեն կրում, եթե պայմանագրի դրույթները խախտվել են անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) հետևանքով:

8.3. Հաճախորդը տեղեկացված է, որ արժեթղթերում ներդրումները կապված են բարձր ռիսկերի հետ, որը կարող է հանգեցնել Հաճախորդի մոտ ֆինանսական կորուստների: Այդ կապակցությամբ Հաճախորդը համաձայնվում է չներկայացնել Բրոքերին գույքային և ոչ գույքային բնույթի պահանջներ՝ իր կողմից տրված պատվերների կատարման արդյունքում առաջացած վնասների համար:

8.4. Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր մեղքով, ժամանակին չներկայացված կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերի ոչ ժամանակին կամ թերի ներկայացման արդյունքում Բրոքերին պատճառված վնասների համար:

8.5. Բրոքերը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ինքնուրույն կայացված ներդրումային որոշումների արդյունքների համար:

8.6. Բրոքերը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից սույն պայմանագիրը միակողմանիորեն լուծելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:

8.7. Բրոքերը պատասխանատվություն չի կրում արժեթղթերի վաճառքը/գնումը չիրականացնելու համար, եթե ՀՀ արժեթղթերի շուկայում բացակայում է Հաճախորդի կողմից սահմանված գնով արժեթղթերի պահանջարկը/առաջարկը:

## 9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

9.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, սույն պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և կողմերի՝ պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, կամ կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

9.2. Պայմանագրի այն կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, հայտնել մյուս կողմին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի նվազեցվեն կողմերի կրած վնասները:

9.3. Պայմանագրի 9.2. կետում նշված պայմանի չկատարման դեպքում կողմերը կորցնում են իրենց իրավունքը նման պայմանների վկայակոչման համար:

9.4. Անհաղթահարելի ուժի ազդեցության վերացումից հետո կողմերը շարունակում են սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը:

## 10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են երկկողմ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 11. ԱՅԼ ԴԻՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

11.2 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր:

11.3. Սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

11.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 12. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բրոքեր	Հաճախորդ
«Ֆյուչըր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ	
ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50	
ՀՎՀՀ 00090674	
h/h 1510001932101300	
Գործադիր տնօրեն	
Ա. Հակոբյան _____	
Կ.Տ.	